

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
ИСТОРИЧЕСКИЙ ФАКУЛЬТЕТ

YEREVAN STATE UNIVERSITY
FACULTY OF HISTORY

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ИСТОРИЯ И КУЛЬТУРА
АРМЕНОВЕДЧЕСКИЙ ЖУРНАЛ

HISTORY AND CULTURE
JOURNAL OF ARMENIAN STUDIES

№ 2

ԵՐԵՎԱՆ - ԵՐԵՎԱՆ - YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ, ИЗДАТЕЛЬСТВО ЕГУ, YSU PRESS
2020

ՀԱՎԵՐԺԻ ԵՎ ՄՓՈՐԴՆԵՐ



ՀԱՅՐԵՆԱՊԱՇՏ ՀԱՅՈՐԴԻՆ, ԱԶՆՎԱԳՈՒՅՆ ԸՆԿԵՐՆ ՈՒ ԱՐԳԱՍԱՎՈՐ ԳԻՏՆԱԿԱՆԸ (Արտակ Երջանիկի Մովսիսյանի հիշատակին)

Հայրենական գիտությունը մեծ կորուստ կրեց. 2020 թ. հոկտեմբերի 3-ին, ուժերի ծաղկման շրջանում՝ 50 տարեկանում, վախճանվեց հայագիտության երախտավոր, պ.գ.դ., պրոֆեսոր, ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ Արտակ Երջանիկի Մովսիսյանը, ով ազգային դիմագծով օժտված հայագետների փառանգի առաջամարտիկներից էր:

Ա. Մովսիսյանը ծնվել է 1970 թ. ապրիլի 10-ին Աբովյան քաղաքում: Մովորել է տեղի թիվ 7 միջնակարգ դպրոցում: Հայոց պատմության նկատմամբ սերը նա դրսևորել է դեռ դպրոցական տարիներին, երբ ուսուցիչները և դասընկերներն արդեն վստահ էին, որ նա ընտրելու է պատմաբանի մասնագիտությունը:

1988-1990 թթ. նա ծառայել է ԽՍՀՄ բանակում:

1990 թ. Ա. Մովսիսյանն ընդունվել է ԵՊՀ պատմության ֆակուլտետ: Ուսման տարիներին, ցուցաբերելով բարձր առաջադիմություն, նա սկսել է զբաղվել նաև գիտական հետազոտություններով: Հայոց պատմության ուսումնասիրության առումով նրա ընտրությունն ի սկզբանե կանգ էր առել հայոց հնագույն շրջանի պատմության հիմնահարցերի վրա: Այդ ուղղությամբ քրտնաջան աշխատանքները շուտով տվեցին իրենց պտուղը: 1993 թ. նրա «Հնագույն պետությունը Հայաստանում. Արատտա (Ք.ա. 28-27-րդ դարեր)» մենագրությունը (Երևան, 1992 թ.) հաղթող ճանաչվեց «Հայաստան» համահայկական հիմնադրամի «Երիտասարդ գիտնականներ-1993» մրցույթում, որով երիտասարդ գիտնականը ճանաչում և հարգանք ձեռք բերեց:

1994 թ. էքստերն կարգով ավարտելով ԵՊՀ պատմության ֆակուլտետը՝ Ա. Մովսիսյանը ընդունվեց ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի ասպիրանտուրա, որն էլ ավարտեց 1997 թ.՝ պաշտպանելով «Վանի թագավորության (Բիայնիլի, Ուրարտու) մեհենագրությունը» խորագրով թեկնածուական ատենախոսություն և արժանանալով պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի: Պետք է նշել, որ դեռ այն ժամանակ Ա. Մովսիսյանի հետազոտության արդյունքները խիստ բարձր գնահատեցին մեծանուն հայագետներն ու արևելագետները:

Ա. Մովսիսյանը 1991-1997 թթ. աշխատել է Հայաստանի պատմության պետական թանգարանում որպես գիտաշխատող, 1997 թվականից՝ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում (2004 թվականից՝ ավագ գիտաշխատող), 1998 թվականից՝ ԵՊՀ հայոց պատմության ամբիոնում (սկզբում որպես ամբիոնի դոցենտ, 2016 թվականից՝ որպես ամբիոնի

վարիչ): 2016 թվականից եղել է ՀՀ ԲՈԿ-ի՝ Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդի անդամ: Անդամակցել է նաև հանրապետության առաջատար գիտական պարբերականներից «Պատմաբանասիրական հանդեսի» և «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդեսի խմբագրական խորհուրդներին:

Պատմաբանը հատկապես աչքի է ընկել կրթության բնագավառում՝ ԵՊՀ պատմության և այլ ֆակուլտետներում դասավանդելով «Հայոց պատմության» ընդհանուր դասընթացը, ինչպես նաև «Նախամաշտոցյան Հայաստանի գրավոր մշակույթը» և «Հայոց հնագույն և հին պատմության հիմնահարցեր» հատուկ դասընթացները: Բարեխիղճ աշխատանքի և մարդկային բարձր որակների շնորհիվ նա միշտ էլ վայելել է ուսանողության ու գործընկերների ջերմ սերն ու հարգանքը: Պատահական չէ, որ 2015 թ. նա կրթական ու գիտական բնագավառներում ձեռքբերումների համար պարգևատրվել է ԵՊՀ ոսկե մեդալով:

2015 թ. Ա. Մովսիսյանը պաշտպանեց դոկտորական ատենախոսություն «Հայաստանի գրավոր մշակույթը նախամաշտոցյան ժամանակաշրջանում» թեմայով և արժանացավ պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանի: 2016 թ. նրան շնորհվեց պրոֆեսորի գիտական կոչում:

2016 թ., ստանձնելով ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի վարիչի պատասխանատու պաշտոնը, նա աչքի ընկավ կրթական գործի կազմակերպչի բարձր հատկանիշներով, ինչն արտահայտվում էր ամբիոնի աշխատակիցների համախմբման, կրթական գործում լավագույն մասնագետների ընդգրկման, նոր մասնագետների պատրաստման, հայոց պատմության դասագրքերի ստեղծման, ուսման պրոցեսի ինտերակտիվության աստիճանական բարձրացման, ուսանողների շրջանում վերլուծական կարողությունների զարգացման և այլ կարևոր ուղղություններով հետևողական աշխատանքների իրականացմամբ:

Իսիստ ծավալում է Ա. Մովսիսյանի ներդրումը գիտության բնագավառում: Նրա գիտական հետաքրքրությունները ներառում էին Հայաստանի և հին աշխարհի պատմության ու մշակույթի հարցերը: Տարիների ընթացքում նա տարբեր լեզուներով հեղինակել է ավելի քան երկու տասնյակ մենագրություններ (մի մասը՝ համահեղինակությամբ) և հինգ տասնյակ գիտական հոդվածներ, մի քանի դասագրքեր, հայոց պատմության հանրամատչելի ձեռնարկներ և գիտահանրամատչելի ֆիլմեր:

Ա. Մովսիսյանը նաև վերջին շրջանում ՀՀ-ում հրատարակված հայոց պատմության բոլոր դասագրքերի և ձեռնարկների՝ մեր ժողովրդի պատմության հնագույն շրջանի պատմությանը վերաբերող հատվածների հեղինակն է: Ըստ էության, նրան հաջողվել էր հիմնավորել Արատտա պետության՝ Հայկական լեռնաշխարհում գտնվելու փաստը: Նա, ի տարբերություն խորհրդային շրջանում ընդունված՝ իբր Զ.ա. VI դարում հայ ժողովրդի վերջնական կազմավորման և հայկական պետության ծագման հորինածին ու պարտադրված տեսության կողմնակիցների, վեր էր հանում պատմական իրականությունը՝ տարբեր լեզուներով տպագրվող մենագրություններում պետության ծագումը Հայկական լեռնաշխարհում տեղադրելով Զ.ա. III հազարամյակի սկզբին:

Ընդհանուր առմամբ, Ա. Մովսիսյանի հետազոտությունների առանցքում Հայկական լեռնաշխարհի հնագույն պետություններն էին և նրանց պատմության, պատմական աշխարհագրության, մշակույթի, գրի ու գրչության հարցերը: Մասնավորապես նշելի են տարբեր լեզուներով հրատարակված՝ Արատտա պետության¹, Արմանի երկրի², Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում Հայկական լեռնաշխարհին հատկացվող դերի³,

¹ Տե՛ս Մովսիսյան Ա., *Հնագույն պետությունը Հայաստանում. Արատտա (Զ.ա. 28-27-րդ դարեր)*, Ե., 1992; նույնի՝ *“Aratta: Kutsal yasalar ulkesi”*, Istanbul, 2001.

² Տե՛ս Մովսիսյան Ա., *Հայաստանը Զրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների)*, Ե., 2005:

³ Տե՛ս Մովսիսյան Ա., *Սրբազան լեռնաշխարհը: Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում*, Ե., 2000; նույնի՝ *«Սրբազան լեռնաշխարհը: Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում»*, երկրորդ հրատ., Ե., 2004; նույնի՝ *«Սրբազան լեռնաշխարհը. Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում»*, երրորդ, լրացված հրատ., Ե., 2006; նույնի՝ *“The Sacred Highlands: Armenia*

հայկական մեհենագրության¹ (Վանի թագավորության շրջանի²) և մինչմաշտոցյան շրջանի Հայաստանի գրային համակարգերի³ հարցերին նվիրված հետազոտությունները:

Ա. Մովսիսյանը մեկ այլ վաստակաշատ հայագետի՝ Պետրոս Յովհաննիսյանի հետ իրականացրել է «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիայի» առաջին և երկրորդ հատորների հրատարակությունները⁴ դրանով իսկ մեծ ներդրում ունենալով հայոց հնագույն ու հին շրջանի պատմության սկզբնաղբյուրների տեղեկությունների հանրահռչակման և դրանց քննական բնագրերի հարստացման աշխատանքներում:

Նա նաև իր զգալի նպաստն է բերել «Երևանի պատմության» նոր հրատարակության ստեղծման աշխատանքներին՝ հեղինակելով «Երևանն ավանդազրույցներում և հնագույն աղբյուրներում. քաղաքանվան մեկնաբանության փորձեր» հույժ արժեքավոր բաժինը⁵:

Խիստ կարևոր և հետաքրքրական են Ա. Մովսիսյանի՝ Հայաստանի նշանավոր ուխտավայրերին⁶, հայկական աշխարհակալություններին⁷, ականավոր հայ թագավորներին⁸ ու թագուհիներին⁹ նվիրված մենագրությունները, որոնք պատկերավոր ձևով հանրությանը ներկայացնում էին մեր կորուսյալ հայրենիքի նվիրական սրբավայրերը, պատմության տարբեր դարաշրջաններում ապրած և գործած հայ թագակիրների կենսագրություններն ու մեծագործությունները:

Նա ուշադրության կենտրոնում է պահել հայոց պետականության 5000-ամյա պատմության հիմնահարցերը¹⁰, ձգտելով հասու դարձնել ընթերցող լայն շրջանակներին:

Նա նաև զբաղվել է հայոց պատմության՝ տարբեր ձևաչափերով հրատարակության աշխատանքներով: Մասնավորաբար, հրատարակել է հայոց պատմության պատկերազարդ համառոտ ձեռնարկներ¹¹: Մյուս կողմից նա մասնակցել է ՀՀ բուհերի և դպրոցների

in the Spiritual Geography of the Ancient Near East, Yerevan, 2004; նույնի՝ “Le plateau sacré. L’Arménie dans les notions sacrées anciennes de l’Asie Antérieure”, Erevan-Paris, 2006; նույնի՝ “Священное нагорье. Армения в древнейших духовных восприятиях Передней Азии”, Ереван, 2010; նույնի՝ “La Meseta Sagrada. Armenia en la Geografia Espiritual del Antiguo Medio Oriente”, Ereván, 2010; նույնի՝ “Das heilige Hochland: Die spirituell-geografische Bedeutung Armeniens in den Aufzeichnungen des Alten Orients”, Wambach, 2013.

¹ Տե՛ս Մովսիսյան Ա., Հայկական մեհենագրությունը, Ե., 2003; նույնի՝ «Վանի թագավորության մեհենագրերը. ընդհանուր բնութագիրը և վերծանության բանալին», «Հանդես ամսօրեայ», 1996, № 1-12, էջ 360-403; նույնի՝ «Նախամաշտոցյան Հայաստանի գրավոր ժառանգությունը», «Պատմա-բանասիրական հանդես», 2005, № 2, էջ 87-100:

² Տե՛ս Մովսիսյան Ա., Վանի թագավորություն (Բիսյնիյի, Ուրարտու, Արարատ) մեհենագրությունը, Ե., 1998; նույնի՝ «Արարատ-Ուրարտու թագավորությունը», գիտահանրամատչելի այբոմ (հայերեն, անգլերեն, ռուսերեն), Ե., 2018:

³ Տե՛ս Մովսիսյան Ա., Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Ե., 2003; նույնի՝ “The Writing Culture of pre-Christian Armenia”, Yerevan, 2006; “L’héritage écrit de l’Arménie préchrétienne, Université de Provence, Aix-en-Provence, 2007.

⁴ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հ. 1 (հնագույն ժամանակներից մինչև 298 թ.), կազմողներ՝ Պ. Յովհաննիսյան, Ա. Մովսիսյան, Ե., 2007; «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հ. 2 (III դարի վերջերից մինչև IX դարի կեսերը), կազմողներ՝ Պ. Յովհաննիսյան, Ա. Մովսիսյան, Ե., 2011:

⁵ Տե՛ս Միմոնյան Յ., Մովսիսյան Ա. և այլք, Երևանի պատմություն, Ե., 2018:

⁶ Տե՛ս Մովսիսյան Ա., Արևմտյան Հայաստանի 10 ուխտավայրերը (ակնարկներ), Ե., 2011:

⁷ Տե՛ս Մովսիսյան Ա., Բարեպաշտ արքաների աշխարհակալությունը. հարյուրամյա կայսրություն Տիգրան Մեծից առաջ, Ե., 1997; նույնի՝ «Հայոց պատմության աշխարհակալությունները (համառոտ տեսություն), Ե., 2008; նույնի՝ «Տիգրան Մեծ. թագավորներից մեծագույնը», Ե., 2010:

⁸ Տե՛ս Մովսիսյան Ա., 10 հայ ականավոր արքաներ (ակնարկներ), Ե., 2009:

⁹ Տե՛ս Մովսիսյան Ա., 10 հայ ականավոր թագուհիներ, Ե., 2014:

¹⁰ Տե՛ս Մովսիսյան Ա., Հայոց պետականությունը 5000-ամյա և ...20-ամյա (գիտահանրամատչելի պատկերազարդ), Ե., 2011; նույնի՝ «Հայոց 5000-ամյա պետականությունը (գիտահանրամատչելի պատկերազարդ)», 2-րդ հրտ., Ե., 2016; նույնի՝ «Հին Հայաստան. 100 փաստ», Ե., 2019:

¹¹ Տե՛ս Մովսիսյան Ա., Համառոտ պատմություն հայոց (պատկերազարդ և հանրամատչելի), Ե., 2014; նույնի՝ «Պատկերազարդ տեղեկատու Հայոց պատմության», Ե., 2016; նույնի՝ “Guida illustrata della storia d’armenia”, Yerevan, 2018.

համար հայոց պատմության դասագրքերի ստեղծմանը¹: Ձեռք բերված փորձը նա այնուհետև ներդրել է սփյուռքի դպրոցների համար հայոց պատմության դասագրքերի մշակման գործում²:

Ա. Մովսիսյանն իր հոդվածներում անդրադարձել է նաև հայոց պատմության այնպիսի մուտք էջերի լուսաբանմանը, ինչպիսիք են Փոքր Հայքի և Ծոփքի թագավորությունների գահացանկերը³, Հայաստանի և հայ ժողովրդի վերաբերյալ հին հեղինակների՝ նախկինում քննության չարժանացած կարևոր տեղեկությունները⁴:

Հետազոտություններին զուգահեռ Ա. Մովսիսյանը իրականացնում էր տարբեր լեզուներով թողարկվող ֆիլմերի միջոցով հայոց պատմության կարևոր գործող անձանց, վայրերի և իրադարձությունների հանրահռչակման կարևոր գործը: Նա հեղինակմամբ նկարահանվել են Տիգրան Մեծին⁵, Նեմրուզ լեռան սրբավայրին⁶, ժայռապատկերների դարաշրջանից մինչև հայոց այբուբենի ստեղծումը ձգվող պատմական ընթացքին⁷, Երևան քաղաքին⁸, հայոց թագավոր Արտավազդ Բ-ին⁹, Արարատյան թագավորությանը¹⁰ և հայոց դրամաշրջանառությանը¹¹ նվիրված գիտահանրամատչելի ֆիլմեր: Նրա հեղինակած ֆիլմերի շարքում հատուկ նշելի է հայոց պատմության նենգափոխման դեմ պայքարին միտված «Պատմության կեղծարարները. Ադրբեջան» բազմալեզու ֆիլմը¹²:

...Եվ այս հսկայածավալ աշխատանքն Ա. Մովսիսյանը կատարել է հազիվ 50-ամյակը բոլորած: Ուստի՝ ցավով մտածում ես, թե որքա՞ն աշխատանքներ դեռ կարող էր կատարել ու կկատարեր:

Ա. Մովսիսյանը շատ կիսատ գործեր է թողել: Հրատարակության էր պատրաստում մինչևիլլենիստական Հայաստանի պատմության վերաբերյալ մենագրությունը՝ շուրջ 400 էջ ծավալով: Մասնակցում էր նաև հայ դիվանագիտության պատմության ձեռնարկի

¹ Տե՛ս «Հայոց պատմություն», դասագիրք բարձրագույն ուսումնական հաստատությունների համար, խմբ. Հր. Սիմոնյան, Ե., 2012; «Հայոց պատմություն», հանրակրթական դպրոցի 6-րդ դասարանի դասագիրք, Ե., 2007; «Հայոց պատմություն», ավագ դպրոցի 10-րդ դասարանի ընդհանուր և բնագիտական հոսքերի դասագիրք, Ե., 2009; «Հայոց պատմություն», ավագ դպրոցի 10-րդ դասարանի հումանիտար հոսքի դասագիրք, Ե., 2009:

² Տե՛ս Մովսիսյան Ա., Հայոց պատմություն. ուսումնական ձեռնարկ Սփյուռքի մեկօրյա հայկական դպրոցների համար, Ե., 2011; նույնի՝ «История Армении. Учебное пособие для однодневных армянских школ Диаспоры», Ереван, 2013; նույնի՝ «Histoire d'Arménie», Manuel scolaire pour les écoles arméniennes du dimanche de la diaspora, Erevan, 2016.

³ Տե՛ս Մովսիսյան Ա., Ծոփքի թագավորության գահացանկը, մաս Ա, «Հայագիտության հարցեր», 2020, № 1, էջ 3-23, մաս Բ, նույն տեղում, № 2, էջ 64-80; Մովսիսյան Ա, Կարապետյան Լ., Փոքր Հայքի թագավորության գահացանկը, «Պատմաբանասիրական հանդես», 2020, № 2, էջ 21-46:

⁴ Տե՛ս Մովսիսյան Ա., Հայաստանի հարավարևմտյան սահմանն ըստ Հերոդոտոսի տեղեկությունների, «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2019, № 1, էջ 6-10; նույնի՝ «Հայ Էթնոսի տարածման աշխարհագրությունը մեր թվականության սկզբին (ըստ Ստրաբոնի վկայությունների)», «Պատմություն և մշակույթ» հայագիտական հանդես, 2020, № 1, էջ 34-40; նույնի՝ «Կտեսիսա Կնիդացու տեղեկությունները Հայաստանի մասին», «Բանբեր Երևանի համալսարանի», «Հայագիտություն», 2020, № 1, էջ 3-11:

⁵ Տե՛ս «Տիգրան Մեծ. հայրենապաշտ տիրակալը» (2007), <https://www.youtube.com/watch?v=VDZB239mj14>

⁶ Տե՛ս «Նեմրուզ. Արև արքայի մեծ սրբավայրը» (2008), <https://www.youtube.com/watch?v=AaWRMUzII2c>

⁷ Տե՛ս «Ժայռապատկերներից մինչև այբուբեն» (2009),

մաս Ա՝ <https://www.youtube.com/watch?v=G1mDkIrnEfc>;

մաս Բ՝ https://www.youtube.com/watch?v=K53Upl_3cqs;

մաս Գ՝ <https://www.youtube.com/watch?v=sedF48uH9YQ&t=938s>

⁸ Տե՛ս «Հռոմից ավելի հին մայրաքաղաքը» (2014), https://www.youtube.com/watch?v=DJICy-oE_2M; «Հարավայսկների ճամփորդը» (2018), <https://www.youtube.com/watch?v=eiKHDBUfeRg>

⁹ Տե՛ս «Արտավազդ Բ՝ Պատիվը կյանքից վեր» (2014), <https://www.youtube.com/watch?v=uXgl4TKz3ns>

¹⁰ Տե՛ս «Արարատ-Ուրարտու թագավորությունը» (2016),

<https://www.youtube.com/watch?v=W-6WIVTctM4&t=2s>

¹¹ Տե՛ս «Դրամապատում. Հայոց դրամաշրջանառության պատմությունը» (2019),

<https://www.youtube.com/watch?v=UMSGIwYSSao>

¹² Տե՛ս «Պատմության կեղծարարները. Ադրբեջան» (2014),

<https://www.youtube.com/watch?v=9I4MuKrxh54>

ստեղծման աշխատանքներին: Մահվանից քիչ առաջ էլ՝ 2020 թ. սեպտեմբերին, ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի հայտարարած մրցույթում նրա ներկայացրած՝ «Հայկական լեռնաշխարհը հին արևելքի Զ.ա. III հազարամյակի երկրորդ կեսի և II հազարամյակի առաջին կեսի գրավոր աղբյուրներում» թեման երաշխավորվել էր ֆինանսավորման: Մեծ ոգևորությամբ նախապատրաստվում էր թեմայի կատարման աշխատանքներին...

Ցավոք, անժամանակ մահը նրան հնարավորություն չտվեց շարունակելու արգասաբեր գործունեությունը հայագիտության խոպան տարածքում, իսկ մեր հանրությանը զրկեց նրա նորանոր ուսումնասիրություններով գիտելիքները զարգացնելու հնարավորությունից:

Արտակ Մովսիսյանի՝ օժտված գիտնականի, սրտամոտ ընկերոջ, արժանապատիվ ու պայքարող քաղաքացու և, պարզապես, լավ ու բարի մարդու հիշատակը միշտ վառ է մնալու գործընկերների, ուսանողների և բոլոր նրան ճանաչողների սրտերում:

Արման Եղիազարյան - պ.գ.դ., պրոֆեսոր
Էդիկ Մինասյան - պ.գ.դ., պրոֆեսոր